

60 էր վերջն Պողոտանաց երկրին եւ մուտ ի Թուրքաց աշխարհն: Եւ այս Կալասուս առջեւոյն երթայր սրընթաց ահազնատեսիլ, մեծ եւ ծովանման գետն Թունայ, սոսկալի եւ բաղմաց զարհուրելի, լայնատարած եւ անդընդային, մարդակուլ եւ արենարբու:

65 Եւ Օգոստոսի ԻԲ., օրն կիրակի, անցաք զայն անհուն գետն. եւ երկուշարթին յայն կոյս անցեալ մտաք ի գեղջուկ մի ՄԻՋԻՆ անուն: Եւ անդ կացաք երեք օր. եւ անդ առնուին զԹուրքին կօմրուկն: Եւ չուեալ անտի
70 երկու օր ու կէսն եկաք ի ԽԱՐԱՍՈՒՎՆ խասապայ: Եւ Օգոստոս ԻԶ. մտաք ի ՊԱՉԱՐՃՈՍ: Եւ անտի երկու օրն հասաք ի ԲՐԱՎԱՏԻ: Եւ այս քաղաքս էր ի մէջ երկուց բարձր լերանց, զոր ոմանք ի քաղաքացոցն
75 ասին մեղ, թէ յառաջն ծով էր այս վայրքս. եւ հաւանելի էր բանք նոցա լսողաց, զի եւ տեղիքն զայն յայտ առնէին: Եւ կային անդ յորով Հայք անով. ունէին եւ ժամատեղ մի անակ. երկու էրէց, մին հարեղայ կայր:

80 Անտի եկաք ԵՆԿԻ ՔՅՆ. եւ օթեցաք ի Չանկին: Եւ ընդ առաւօտն սկսաք անցանել զՊԱԼՈՒՆՆ: Եւ այս Պալիսանս յոյժ նեղ եւ դժուարին էր եւ քարուտ ճանապարհ երկու լերանց միջով. ապա այնպէս ճանփան սարր
85 էր, որ հազիւ արապան անցանէր: Եւ այս